ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐԻ ԵՎ ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ ԿԱ Ո ՇՀԱՊՁԲ-15/3-2-ԹՈՒՂԹ/2016/1-ՃՈ/ՏՎ/ԱՎՎ

ք. Երևան <<11>> <<04>> 2016թ.

ՀՀ ոստիկանությունը, ի դեմս ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Ա. Համբարյանի, որը գործում է ոստիկանության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Սմարթլայն» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Տ. Ղարիբյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1.Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել սույն պայմանագրի N1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված **գրենական պիտույքներ և գրասենյակային նյութեր** /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /հավելված N 3/:

2. Մատակարարման պայմանները

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին /Ստացողին/՝ նրա կողմից նշված հասցեներով:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում սույն պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայամագիրը.

3.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի,

3.1.8 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից /Ստացողից/ պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից /Ստացողից/ պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայամագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի /Ստացողի/ համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին /Ստացողին/ հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Սույն պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին /Ստացողին/ մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ/ և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին /Ստացողին/ հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Գնորդին /Ստացողին/ հանձնել Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի /Ստացողի/ պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Գնորդի /Ստացողի/ կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.10 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.11 Պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

4. Ապրանքի գինը և վճարման կարգը

4.1 Սույն պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ **43 120 800** (քառասուներեք միլիոն հարյուր քսան հազար ութ հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, որից 31 188 000 (երեսունմեկ միլիոն հարյուր ութսունութ հազար) ՀՀ դրամի վճարումը կկատարվի անհրաժեշտ ֆինանսական միջոցներ հատկացվելու դեպքում:

Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

Սույն պայմանագրի ֆինանսավորումը կկատարվի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2016թ. դեկտեմբերի 25-ը:

5. Ապրանքի որակը

Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

6. Ապրանքի հանձնումը և ընդունումը

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին /Ստացողին/՝ Պայմանագրի N 2 հավելվածում նշված ծավալներով և ժամկետներում:

6.2 Վաճառողը՝ Ապրանքի հանձման ավարտից երկու աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ /Հավելված N 4/:

6.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից եռօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.4 Ապրանքը Գնորդի կողմից ընդունված է համարվում երկկողմանի հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու պահից:

7. Կողմերի պատասխանատվությունը

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Այլ պայմաններ

9.1 Այն դեպքում, երբ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վաճառողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Վաճառողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.2 Սույն պայմանագիրը 11 932 800 (տասնմեկ միլիոն ինը հարյուր երեսուներկու հազար ութ հարյուր) ՀՀ դրամի չափով ուժի մեջ է մտնում ստորագրման պահից, իսկ 31 188 000 (երեսունմեկ միլիոն հարյուր ութսունութ հազար) ՀՀ դրամի չափով ուժի մեջ կմտնի այդ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ հատկացնելու դեպքում՝ կողմերի միջև համապատասխան համաձայնագիր կնքելու պահից և կգործի մինչև փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը: Վերը նշված չափաբաժիններով նախատեսված աշխատանքների կատարման համար տվյալ տարում միջոցներ չնախատեսվելու դեպքում, այդ մասով Պայմանագիրը կլուծվի:

Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

9,5 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

9.6 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող և (կամ) Գնորդ) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.7 Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի, ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնություն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինասական հատկացումների նվազեցումը:

2) սույն պայմանագրով նախատեսված Ապրանքների շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

9.8 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.9 Պայմանագիրը և հավելվածները կազմված են 13 էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N1, N2, N2.1, N2.2 , N3, N3.1, N3.2 հավելվածները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.10 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ ոստիկանություն ք. Երևան, Նալբանդյան 130 ՀՀ Ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011159044 ՀՎՀՀ 01533334 Հ/Հ 900013150041 ՀՎՀՀ 01840082 Հ/Հ 900013159034 ՀՎՀՀ 01569613 հեռ. 59-68-57 Էլ. փոստ: police-gnumner@rambler.ru	«Սմարթլայն» ՍՊԸ ք.Երևան, Վարդանանց 110 «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ Հեռ. 55-84-83, 57-11-16 Հ/Հ 1150009537660100 ՀՎՀՀ 01548908 էլ. հասցեն՝ SSmartline@mail.ru
_____ Վ. Գևորգյան /ստորագրություն/ /ստորագրության դեմքի անվանակալ/	_____ Տ. Դարիբյան /ստորագրություն/ (ստորագրության)

Հավելված N 1
<< 11 >> << 04 >> 2016թ. կնքված
N ՀՀ ԿԱ Ո ՇՀԱՊՁԲ-15/3-2-ԹՈՒՂԹ/2016/1-ՃՈ/ՏՎ/ԱՎՎ
ծածկագրով գնման պայմանագրի

ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐԻ ԵՎ ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հ/Հ	Անվանումը	Տեխնիկական բնութագիրը
1	Գրելու թուղթ	A4, չկավճած էֆկալիպտե թուղթ, օգտագործվում է տպագրման համար, թելիկներ չպարունակող, մեխանիկական եղանակով ստացված: Խտությունը՝առնվազն 80 գ/մ^2 (առանց շեղումների) Չափերը՝ 21.0X29.7 մմ. (առանց շեղումների) Առանց փայտային խեժի և գազանման քլորի պարունակության Նախատեսված՝միակողմանի և երկկողմանի տպագրության համար Պիտանի՝լազերային, թանաքաշիթային և օֆսեթ տպագրության համար Սպիտակությունը՝ ոչ պակաս 171%-ից (CIE համակարգով) (առանց շեղումների) ուլտրասպիտակ Պայծառությունը՝ 105% Հաստությունը՝ 108մկմ Անթափանցելիությունը՝ 94%-ից ոչ պակաս Անհարթությունը (шероховатость) ոչավել՝ 180մլ/ր՝ Խոնավությունը՝ 3,5-4,5% Արխիվային պահպանման ժամկետ՝ ոչ պակաս քան 150 տարի Օդի անցանելիություն՝ 1700 մլ/ր Գործարանային փաթեթավորմամբ Յուրաքանչյուր տուփում թերթերի քանակը՝ 500 հատ (առանց շեղումների) Մեկ տուփի քաշը՝ 2,5 կգ Եվրոպական արտադրության կամ համարժեք ISO 14001, ISO 9706, OHSAS 18001, SFI, FSC, PEFC ստանդարտներին համապատասխան (անհրաժեշտության դեպքում կարող են պահանջվել համապատասխանությունը հավաստող սերտիֆիկատներ) Տոքսիկայնություն՝ ոչ ավել քան 95,3% Ֆենոլի պարունակություն՝ ոչ ավել քան 0,001 մգ/մ^3 Ֆորմալդեգիդի պարունակություն՝ ոչ ավել քան 0,0014 մգ/մ^3 Անհրաժեշտ է ներկայացնել վերոնշյալ մասնագրերը արտադրողի կողմից հավաստող նամակ-գրություն՝ ուղղված մատակարարի անունով: Մատակարարման ժամանակ անհրաժեշտ է ներկայացնել ապրանքի օրիգինալության հավաստագիր (Certificate of Origin)
2	Գրելու թուղթ	A4, չկավճած էֆկալիպտե թուղթ, օգտագործվում է տպագրման համար, թելիկներ չպարունակող, մեխանիկական եղանակով ստացված: Խտությունը՝առնվազն 80 գ/մ^2 (առանց շեղումների) Չափերը՝ 21.0X29.7 մմ. (առանց շեղումների) Առանց փայտային խեժի և գազանման քլորի պարունակության Նախատեսված՝միակողմանի և երկկողմանի տպագրության համար Պիտանի՝լազերային, թանաքաշիթային և օֆսեթ տպագրության համար Սպիտակությունը՝ ոչ պակաս 171%-ից (CIE համակարգով) (առանց շեղումների) ուլտրասպիտակ Պայծառությունը՝ 105% Հաստությունը՝ 108մկմ Անթափանցելիությունը՝ 94%-ից ոչ պակաս Անհարթությունը (шероховатость) ոչավել՝ 180մլ/ր՝ Խոնավությունը՝ 3,5-4,5% Արխիվային պահպանման ժամկետ՝ ոչ պակաս քան 150 տարի Օդի անցանելիություն՝ 1700 մլ/ր Գործարանային փաթեթավորմամբ Յուրաքանչյուր տուփում թերթերի քանակը՝ 500 հատ (առանց շեղումների) Մեկ տուփի քաշը՝ 2,5 կգ Եվրոպական արտադրության կամ համարժեք

		ISO 14001, ISO 9706, OHSAS 18001, SFI, FSC, PEFC ստանդարտներին համապատասխան (անհրաժեշտության դեպքում կարող են պահանջվել համապատասխանությունը հավաստող սերտիֆիկատներ) Տոքսիկայնություն՝ ոչ ավել քան 95,3% Ֆենոլի պարունակություն՝ ոչ ավել քան 0,001 մգ/մ^3 Ֆորմալդեգիդի պարունակություն՝ ոչ ավել քան 0,0014 մգ/մ^3 Անհրաժեշտ է ներկայացնել վերոնշյալ մասնագրերը արտադրողի կողմից հավաստող նամակ-գրություն՝ ուղղված մատակարարի անունով: Մատակարարման ժամանակ անհրաժեշտ է ներկայացնել ապրանքի օրիգինալության հավաստագիր (Certificate of Origin)
3	Գրելու թուղթ	A4, չկավճած էֆկալիպտե թուղթ, օգտագործվում է տպագրման համար, թելիկներ չպարունակող, մեխանիկական եղանակով ստացված: Խտությունը՝առնվազն 80 գ/մ^2 (առանց շեղումների) Չափերը՝ 21.0X29.7 մմ. (առանց շեղումների) Առանց փայտային խեժի և գազանման քլորի պարունակության Նախատեսված՝միակողմանի և երկկողմանի տպագրության համար Պիտանի՝լազերային, թանաքաշիթային և օֆսեթ տպագրության համար Սպիտակությունը՝ ոչ պակաս 171%-ից (CIE համակարգով) (առանց շեղումների) ուլտրասպիտակ Պայծառությունը՝ 105% Հաստությունը՝ 108մկմ Անթափանցելիությունը՝ 94%-ից ոչ պակաս Անհարթությունը (шероховатость) ոչավել՝ 180մլ/ր՝ Խոնավությունը՝ 3,5-4,5% Արխիվային պահպանման ժամկետ՝ ոչ պակաս քան 150 տարի Օդի անցանելիություն՝ 1700 մլ/ր Գործարանային փաթեթավորմամբ Յուրաքանչյուր տուփում թերթերի քանակը՝ 500 հատ (առանց շեղումների) Մեկ տուփի քաշը՝ 2,5 կգ Եվրոպական արտադրության կամ համարժեք ISO 14001, ISO 9706, OHSAS 18001, SFI, FSC, PEFC ստանդարտներին համապատասխան (անհրաժեշտության դեպքում կարող են պահանջվել համապատասխանությունը հավաստող սերտիֆիկատներ) Տոքսիկայնություն՝ ոչ ավել քան 95,3% Ֆենոլի պարունակություն՝ ոչ ավել քան 0,001 մգ/մ^3 Ֆորմալդեգիդի պարունակություն՝ ոչ ավել քան 0,0014 մգ/մ^3 Անհրաժեշտ է ներկայացնել վերոնշյալ մասնագրերը արտադրողի կողմից հավաստող նամակ-գրություն՝ ուղղված մատակարարի անունով: Մատակարարման ժամանակ անհրաժեշտ է ներկայացնել ապրանքի օրիգինալության հավաստագիր (Certificate of Origin)

Գ Ն Ո Ր Դ
ՀՀ ոստիկանություն
ք. Երևան, Նալբանդյան 130
ՀՀ Ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011159044
ՀՎՀՀ 01533334
Հ/Հ 90001315004[illegible]
ՀՎՀՀ 0184[illegible]82
Հ/Հ 90001[illegible]39[illegible]4
ՀՎՀՀ 0156[illegible]
հեռ. 59-68-[illegible]
էլ. փոստ: police-gnumner[illegible]

_____ Ա.[illegible]

/ՀՀ ոստիկանության [illegible]
(ստորագրություն)
Կ.Տ

Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ
«Սմարթլայն» ՍՊԸ
ք.Երևան, Վարդանանց 110
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հեռ. 55-84-83, 57-11-16
Հ/Հ 1150009537660100
ՀՎՀՀ 01548908
էլ. հասցե՝ SSmartline@mail.ru

_____ Տ. Ղարիբյան

/ տնօրեն /
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 2
«11» 04 2016թ.
N ՀՀ ԿԱ Ո ՇՀԱՊՁԲ-15/3-2-ԹՈՒՂԹ/2016/1-ՃՈ/ՏԿ/ԱՎԿ գնման պայմանագրի

ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐԻ ԵՎ ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ

Գնման ժամանակացույց

Հ/Հ	Ապրանքի			Նախատեսվում է գնել 2016								Ընդամենը	
	Անվանումը	Չ/Մ	Մ/Գ	I եռամսյակ		II եռամսյակ		III եռամսյակ		IV եռամսյակ			
				քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը
1	2	3	4	9	10							13	14
2	Գրելու թուղթ	տուփ	1695			3250	5508750	1740	2949300	2050	3474750	7040	11932800
Ընդամենը													**11932800**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ոստիկանություն
ՀՀ Ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011159044
ՀՎՀՀ 01533334
հեռ. 59-68-57
էլ. հասցե: police-gnumner@rambler.ru

_____ *Ա. Հովսեփյան*
/ՀՀ ոստիկանության գործառնական վարչության պետ/
(ստորագրություն)

ՎԱՃԱՌՈՂ

«Սմարթլայն» ՍՊԸ
ք.Երևան, Վարդանանց 110
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հեռ. 55-84-83, 57-11-16
Հ/Հ 1150009537660100
ՀՎՀՀ 01548908
էլ. հասցե՝ SSmartline@mail.ru

Ս. Ղարիբյան
/ տնօրեն/
(ստորագրություն)

Հավելված N 2.1
<< 11 >> 04 2016թ.
N ՀՀ ԿԱ Ո ՇՀԱՊՁԲ-15/3-2-ԹՈՒՂԹ/2016/1-ՃՈ/ՏԿ/ԱՎԿ գնման պայմանագրի

ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐԻ ԵՎ ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ

Գնման ժամանակացույց

Հ/Հ	Ապրանքի			Նախատեսվում է գնել 2016								Ընդամենը	
	Անվանումը	Չ/Մ	Մ/Գ	I եռամսյակ		II եռամսյակ		III եռամսյակ		IV եռամսյակ			
				քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը
	2	**3**	**4**	**9**	**10**							**13**	**14**
1	Գրելու թուղթ	տուփ	1695			6000	10170000	3500	5932500	3500	5932500	13000	22035000
Ընդամենը													**22035000**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ոստիկանություն
ՀՀ Ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900013150041
ՀՎՀՀ 01840082
հեռ. 59-68-57
Էլ. հասցե: police-armmap@rambler.ru

_____ **Ա. Հովսեփյան**
/ՀՀ ոստիկանության գործառնական տնօրեն/

ՎԱՃԱՌՈՂ
«Սմարթլայն» ՍՊԸ
ք.Երևան, Վարդանանց 110
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հեռ. 55-84-83, 57-11-16
Հ/Հ 1150009537660100
ՀՎՀՀ 01548908
էլ. հասցե: S3martline@mail.ru

_____ **Տ. Զարիբյան**
/տնօրեն/

Հավելված N 2.2
<< 11 >> 04 2016թ.
N ՀՀ ԿԱ Ո ՇՀԱՊՁԲ-15/3-2-ԹՈՒՂԹ/2016/1-ՃՈ/ՏԿ/ԱԿԿ գնման պայմանագրի

ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐԻ ԵՎ ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ

Գնման ժամանակացույց

ՀՀ	Ապրանքի			Նախատեսվում է գնել 2016.								Ընդամենը	
	Անվանումը	Չ/Մ	Մ/Գ	I եռամսյակ		II եռամսյակ		III եռամսյակ		IV եռամսյակ			
				քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը
1	2	3	4	9	10							13	14
3	Գրելու թուղթ	տուփ	1695			3350	5678250	2050	3474750			5400	9153000
Ընդամենը													**9153000**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ոստիկանություն
ՀՀ Ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900013159034
ՀՎՀՀ 01569613
հեռ. 59-68-57
Էլ. հասցե: police-gnumner@rambler.ru

_____ Ա. Հակոբյան
/ՀՀ ոստիկանության պետի տեղակալ/

ՎԱՃԱՌՈՂ

«Սմարթլայն» ՍՊԸ
ք.Երևան, Վարդանանց 110
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հեռ. 55-84-83, 57-11-16
Հ/Հ 1150009537660100
ՀՎՀՀ 01548908
էլ. հասցեն՝ SSmartline@mail.ru

_____ Տ. Զարիբյան
/Կնոջոնկ/
(ստորագրություն)

Հավելված N 3
<< 11 >> 04 2016թ.
N ՀՀ ԿԱ Ո ՇՀԱՊՁԲ-15/3-2-ԹՈՒՂԹ/2016/1-ՃՈ/ՏԿ/ԱՎԿ գնման պայմանագրի

Վճարման ժամանակացույց

ՀՀ դրամ

Հ/Հ	Ապրանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2016թ բյուջեից՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
		1-ին եռամսյակ			2-րդ եռամսյակ			3-րդ եռամսյակ			4-րդ եռամսյակ			Ընդամենը տարի
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	
1	Գրելու ուղթ				5508750	5508750	5508750	8458050	8458050	8458050	11932800	11932800	11932800	11932800
Ընդամենը														**11932800**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ոստիկանություն
ՀՀ Ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011159044
ՀՎՀՀ 01533334
հեռ. 59-68-57
էլ. հասցե: police-gnum@mfe.am

_____ Ա. [illegible]
/ՀՀ ոստիկանության [illegible]/
(ստորագրություն)

ՎԱՃԱՌՈՂ

«Սմարթլայն» ՍՊԸ
ք.Երևան, Վարդանանց 110
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հեռ. 55-84-83, 57-11-16
Հ/Հ 1150009537660100
ՀՎՀՀ 01548908
էլ. հասցե՝ SSmartline@mail.ru

_____ Տ. [illegible]արիբյան
/ տնօրեն /
(ստորագրություն)

Հավելված
ՀՀ ֆինանսների նախարարի
2015 թվականի ապրիլի 1-ի N 179-Ն հրամանի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆԱՄՆ-ԸՆԴՈՒՆԱՄՆ

« » « » 2015թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 2015թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 2015թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ մատակարարումների վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված
<<____>> _____20 թ. կնքված
N _____ ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
----------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ------ -ին կնքված N ----------
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
N ՀՀ ԿԱ Ո ՇՀԱՊՁԲ-15/3-2-ԹՈՒՂԹ/2016/1-ՃՈ/ՏԿ/ԱՎՎ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան <<25>> 05 **2016թ.**

ՀՀ ոստիկանությունը, ի դեմս ՀՀ ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Ա. Համբարյանի, որը գործում է ոստիկանության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ՝ Պատվիրատու և «Սմարթլայն» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Տ. Ղարիբյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ՝ Կատարող, մյուս կողմից, հիմք ընդունելով 11.04.2016թ-ին կնքված N ՀՀ ԿԱ Ո ՇՀԱՊՁԲ-15/3-2-ԹՈՒՂԹ/2016/1-ՃՈ/ՏԿ/ԱՎՎ գնման Պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 9.4 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը /այսուհետև՝ Համաձայնագիր/ հետևյալի մասին.

1.Համաձայնագրի առարկան, գինը և վճարման կարգը

1.1 Սույն համաձայնագրով Կատարողի կողմից մատակարարման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է **31 188 000** (երեսունմեկ միլիոն հարյուր ութսունութ հազար) ՀՀ դրամ: Գումարը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, ինչպես նաև Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

1.2 Պատվիրատուն մատակարարված ապրանքի դիմաց **31 188 000** (երեսունմեկ միլիոն հարյուր ութսունութ հազար) ՀՀ դրամի վճարումը կատարում է սույն Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 1-ին և Հավելված 2-ին համապատասխան:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, Ծառայության մատուցման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն Համաձայնագիրը կազմված է (3) երեք էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու բնօրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

2.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ԿԱ ոստիկանությունը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ ոստիկանություն	**«Սմարթլայն» ՍՊԸ**
ք. Երևան, Նալբանդյան 130	**ք.Երևան, Վարդանանց 110**
ՀՀ Ֆինանսների նախարարության	**«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ**
աշխատակազմի գործառնական վարչություն	**Հեռ. 55-84-83, 57-11-16**
Հ/Հ 900013150041	**Հ/Հ 1150009537660100**
ՀՎՀՀ 01840082	**ՀՎՀՀ 01548908**
հեռ. 59-68-57	**էլ. հասցե՝ SSmartline@mail.ru**
էլ. հասցե police-gnumner@rambler.ru	
_____ Ա. Համբարյան	**_____ Տ. Ղարիբյան**
/ՀՀ ոստիկանության պետի տեղակալ/	**/ տնօրեն/**
(ստորագրություն)	**(ստորագրություն)**
Կ.Տ	**Կ.Տ.**

Համաձայնագիր N 1-ի
Հավելված N 1
<<25>> 05 2016թ.

N ՀՀ ԿԱ Ո ՇՀԱՊՁԲ-15/3-2-ԹՈՒՂԹ/2016/1-ՃՈ/ՏՎ/ԱՎՎ գնման պայմանագրի

Վճարման ժամանակացույց

N	*Ապրանքի անվանումը*	*Նախատեսվում է ֆինանսավորել 2016թ.*												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը**
1.	Գրելու թուղթ					10170000	10170000	16102500	16102500	16102500	22035000	22035000	22035000	22035000
Ընդամենը														22035000

ԳՆՈՐԴ
ՀՀ ոստիկանություն
ք. Երևան, Նալբանդյան 130
ՀՀ Ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 90001315004
ՀՎՀՀ 01840082
հեռ. 59-68-57
էլ. հասցե police-gnumner@rambler.ru

Վ. Հարությունյան
/ՀՀ ոստիկանության պետի տեղակալ/
(ստորագրություն)
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«Սմարթլայն» ՍՊԸ
ք.Երևան, Վարդանանց 110
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հեռ. 55-84-83, 57-11-16
Հ/Հ 1150009537660100
ՀՎՀՀ 01548908
էլ. հասցեն՝ SSmartline@mail.ru

Տ. Ղարիբյան
/տնօրեն/
(ստորագրություն)
Կ.Տ.

Համաձայնագիր N 1-ի
Հավելված N 2
<<25>> 05 2016թ.

N ՀՀ ԿԱ Ո ՇՀԱՊՁԲ-15/3-2-ԹՈՒՂԹ/2016/1-ՃՈ/ՏՎ/ԱՎՎ գնման պայմանագրի
Վճարման ժամանակացույց

N	Ապրանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2016թ.												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
3	Գրելու թուղթ					5678250	5678250	9153000	9153000	9153000	9153000	9153000	9153000	9153000
Ընդամենը														9153000

ԳՆՈՐԴ
ՀՀ ոստիկանություն
ք. Երևան, Նալբանդյան 130
ՀՀ Ֆինանսների նախարարության
աշխատակազմի գլխավոր հաշվապահություն
Հ/Հ 90001315934
ՀՎՀՀ 01569613
հեռ. 59-68-57
էլ. հասցե police-summer@rambler.ru

_____ Ս. Համբարյան
/ՀՀ ոստիկանության պետի տեղակալ/
(ստորագրություն)
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«Սմարթլայն» ՍՊԸ
ք.Երևան, Վարդանանց 110
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հեռ. 55-84-83, 57-11-16
Հ/Հ 1150009537660100
ՀՎՀՀ 01548908
էլ. հասցեն՝ SSmartline@mail.ru

_____ Տ. Ղարիբյան
/ տնօրեն/
(ստորագրություն)
Կ.Տ.

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2
N ՀՀ ԿԱ Ո ՇՀԱՊՁԲ-15/3-2-ԹՈՒՂԹ/2016/1-ՃՈ/ՏՎ/ԱՎՎ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան <<09>> 09 **2016թ.**

ՀՀ ոստիկանությունը, ի դեմս ՀՀ ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության Ա. Համբարյանի, որը գործում է ոստիկանության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ՝ Պատվիրատու և «Սմարթլայն» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Տ. Ղարիբյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ՝ Կատարող, մյուս կողմից, հիմք ընդունելով 11.04.2016թ.-ին կնքված N ՀՀ ԿԱ Ո ՇՀԱՊՁԲ-15/3-2-ԹՈՒՂԹ/2016/1-ՃՈ/ՏՎ/ԱՎՎ գնման Պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.3 կետը՝ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1.Համաձայնագրի առարկան, գործողության ժամկետը և վճարման կարգը

1.1 Կողմերը համաձայնության եկան 11.04.2016թ.. կնքված ՀՀ ԿԱ Ո ՇՀԱՊՁԲ-15/3-2-ԹՈՒՂԹ/2016/1-ՃՈ/ՏՎ/ԱՎՎ պայմանագրի 4.1 կետը փոփոխել՝ նշված գումարը ավելացնել մինչև 20 տոկոսի չափով, որը կազմում է **2712000** (երկու միլիոն յոթ հարյուր տասներկու հազար) ՀՀ դրամ:

1.3 Վաճառողի կողմից մատակարարված ապրանքի դիմաց Պատվիրատուն վճարումը կատարում է սույն Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 2-ին համապատասխան:

3. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից, գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4 Սույն Համաձայնագիրը կազմված է (3) երկու էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու բնօրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ԿԱ ոստիկանությունը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ու	Վ Ա Ճ Ա Ռ Ող
ՀՀ ոստիկանություն **ք. Երևան, Նալբանդյան 130** **ՀՀ Ֆինանսների նախարարության** **աշխատակազմի գործառնական վարչություն** **Հ/Հ 900011159291** **ՀՎՀՀ 01533334** **հեռ. 59-68-57** **էլ. փոստ: police-gnumner@rambler.ru**	**«Սմարթլայն» ՍՊԸ** **ք.Երևան, Վարդանանց 110** **«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ** **Հեռ. 55-84-83, 57-11-16** **Հ/Հ 1150009537660100** **ՀՎՀՀ 01548908** **էլ. հասցե: 33martline@mail.ru**
Ա. Համբարյան /ՀՀ ոստիկանության պետի տեղակալ/ (ստորագրություն) Կ.Տ	**Տ. Ղարիբյան** /Տնօրեն/ (ստորագրություն)

Հավելված N 1
<< 09 >> 03 2016թ.
N ՀՀ ԿԱ Ո ՇՀԱՊՁԲ-15/3-2-ԹՈՒՂԹ/2016/1-ՃՈ/ՏԿ/ԱԿԿ գնման պայմանագրի թիվ 2 համաձայնագրի

ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐԻ ԵՎ ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ

Գնման ժամանակացույց

Հ/Հ	Ապրանքի			Նախատեսվում է գնել 2016								Ընդամենը	
	Անվանումը	Չ/Մ	Մ/Գ	I եռամսյակ		II եռամսյակ		III եռամսյակ		IV եռամսյակ			
				քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը
1	2	3	4	9	10							13	14
1	Գրելու թուղթ	տուփ	1695					1600	2712000			1600	2712000
Ընդամենը													**2712000**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ոստիկանություն
ՀՀ Ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011159291
ՀՎՀՀ 01538334
հեռ. 59-68-57
էլ. հասցե: police-gnumner@rambler.ru

Ս.Խաչատրյան
/ՀՀ ոստիկանության ավագ գնահատող/
(ստորագրություն) Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

«Սմարթլայն» ՍՊԸ
ք.Երևան, Վարդանանց 110
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հեռ. 55-84-83, 57-11-16
Հ/Հ 1150009537660100
ՀՎՀՀ 01548908
էլ. հասցեն՝ SSmartline@mail.ru

Ս.Գևորգյան

01548908
"ՍՄԱՐԹԼԱՅՆ"
"SMARTLINE"
«Կ»

Հավելված N 2
<< 29 >> 29 2016թ.
N << ԿԱ Ո ՇՀԱՊՁԲ-15/3-2-ԹՈՒՂԹ/2016/1-ՃՈ/ՏԿ/ԱԿԿ գնման պայմանագրի թիվ 2 համաձայնագրի

Վճարման ժամանակացույց

<< դրամ

Հ/Հ	Ապրանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2016թ՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Ընդամենը տարվա
1	Գրելու թուղթ									2712000	2712000	2712000	2712000	2712000
Ընդամենը														**2712000**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
<< ոստիկանություն
ք. Երևան, Նալբանդյան 130
<< Ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011159291
ՀՎՀՀ 01533334
հեռ. 59-61-52
էլ. փոստ: police-gnumner@rambler.ru

Ա. Հասրաթյան
/<< ոստիկանության պետի տեղակալ/
(ստորագրություն)

ՎԱՃԱՌՈՂ
«Սմարթլայն» ՍՊԸ
ք.Երևան, Վարդանանց 110
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հեռ. 55-84-83, 57-11-16
Հ/Հ 1150009537660100
ՀՎՀՀ 01548908
էլ. հասցե՝ SSmartline@mail.ru

Ս. Գևորգյան
/տնօրեն/
(ստորագրություն)